


ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԻՆՉ Ե ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Պարբերական հիվանդությունը ամենահաճախ հանդիպող առևտրորոշող ախտաբանական ախտաբանական հիվանդությունն է, որի հիմքում գենետիկ շեղումն է: Հիվանդությունն առաջանում է MEFV գենում մուտացիայի պատճառով: Միշտ չէ, որ մուտացիայի առկայությունը վկայում է հիվանդության առկայության մասին: Հնարավոր է կրեյիություն, առանց հիվանդության դրսևորման:



Պարբերական հիվանդությունը հաճախ է հանդիպում որոշ Եթևիկ խմբերում, մասնավորապես Նաև հայերի մոտ: Կլինիկորեն այն դրսևորվում է ինքնաբերական առաջացող տենդի դրվագներով, որն ուղեկցվում է շճաթաղանթների ոչ ինֆեկցիոն բորբոքումով: Սրա արդյունքում կարող է առաջանալ որովայնի ցավ, կրծքավանդակի ցավ, հոդամկանացավեր, հոդաբորբեր, տոնզիլիտներ, որոնք տևում են մի քանի ժամ կամ օր:

Նոպայից դուրս հիվանդի ինքնազգացողությունը լինում է բավարար:

Պարբերական հիվանդության վերջնական ախտորոշումը կատարվում է հիվանդության պատմության, կլինիկական նշանների, լաբորատոր-գործիքային հետազոտությունների և գենետիկ քննության արդյունքների հիման վրա:

Հիվանդության բարդությունը ամփոփող կոչվող սպիտակուցի կոտակումն է տարբեր օրգան համակարգերում՝ երիկամ, աղիներ, վահանաձև գեղձ և այլն, ինչը հանգեցնում է տվյալ օրգանի ֆունկցիայի խանգարման, օր.՝ երիկամային անբավարարություն:

Հիվանդության ախտորոշումից հետո սկսվում է բուժում կոլիսիցին դեղամիջոցով: Բուժումը անհրաժեշտ է ոչ միայն նոպաների կառավարման, այլև հիվանդության ծանր բարդություններից խուսափելու համար:



Բուժման ընթացքում հիվանդը շարունակական հսկողության կարիք ունի: Պարբերական հիվանդությունը հանդիպում է թե տղաների, թե աղջիկների մոտ և կարող է սկսվել ցանկացած տարիքում, այդ թվում՝ վաղ մանկական:

Կարևոր է նշել, որ ծնողների ու ազգականների՝ Պարբերական հիվանդություն չունենալը չի բացառում երեխայի մոտ հիվանդության հայտնաբերումը:

ԻՆՉ Ե ԿՈՒՆԻՑԻՆԸ

Կոլիսիցինը բերանացի ընդունման, բուսական հիմքով դեղամիջոց է, որն ունի հակաբորբոքային ազդեցություն: Կիրառվում է Պարբերական հիվանդության, հոդատապի բուժման ժամանակ:



Կոլիսիցինը ցավազրկող չէ, և չի թույլատրվում օգտագործել ցավազրկման նպատակով:

Կարևոր է չգերազանցել բուժական դեղաչափը, նույնիսկ մի փոքր ավել դեղաչափ ստանալը կարող է շատ լուրջ հետևանք թողնել:

Բուժական դեղաչափից ցածր դեղաչափերով ընդունելը նույնպես ապահով չէ և չի կանխարգելում հետագա բարդությունները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կոլիսիցին ընդունելիս խուսափե՛ք թուրինջ (գրեյֆֆուտ) ուտելուց և թուրինջի հյութից: Այն կարող է մեծացնել օրգանիզմում կոլիսիցինի խտությունը:

Կոլիսիցին ընդունե՛ք սննդի հետ կամ դրանից հետո. դա կհեշտացնի տանելիությունը:

Դադարեցրե՛ք կոլիսիցինի ընդունումն աղիքային վարակների ժամանակ, երբ առկա է արտահայտված լուծ, որպեսզի խուսափեք տուրքի ազդեցությունից:

Որոշ դեղամիջոցներ կարող են ազդել կոլիսիցինի աշխատանքի վրա՝ հավանական դարձնելով լուրջ կամ կյանքին սպառնացող կողմնակի երևույթները: Առանց բժշկի գիտության մի՛ ընդունեք այլ դեղամիջոցներ, մասնավորապես՝

1. ազաթիոպրին, մետոտրեքսատ կամ ցանկացած այլ դեղամիջոց, որը կարող է ազդել երիկամների, լյարդի կամ արյան վրա,
2. կլարիտրոմիցին, Էրիթրոմիցին, ազիթրոմիցին. հակաբիոտիկներ, որոնք օգտագործվում են վարակների բուժման համար,

3. հակավիրուսային դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են ՄԻԱՎ վարակի բուժման համար,
4. ցիկլոսպորին՝ պսորիազի, ռևմատոիդ արթրիտի և օրգանների փոխպատվաստումից հետո կիրառվող դեղամիջոց,
5. հակասնկային դեղամիջոցներ,
6. վերապամիլ, դիլտիազեմ՝ դեղամիջոցներ սրտի համար

Վերոնշյալ ցանկը սպառիչ չէ. ցանկացած դեղ ընդունելուց առաջ, պետք է ստուգել փոխներգործությունը կոլիսիցինի հետ:

Բավարար տեղեկատվություն չկա, որ բուսական միջոցները և հավելումներն անվտանգ են կոլիսիցինի հետ ընդունելու համար: Խուսափե՛ք դրանցից:

Կոլիսիցինը ունի կողմնակի երևույթներ, ամենահաճախ դիտվողները կապված են աղեստամոքսային տրակտի հետ՝ դիարեա՝ 23%, փսխում՝ 17%, սրտխառնոց՝ 4%-17%: Այլ կողմնակի երևույթներից են լյարդային ֆերմենտների բարձրացում, մկանացավ, մկանային թուլություն, արյունաբանական խանգարումներ, մազաթափություն, ցան:

Կոլիսիցինի ընդունումը հսկվում է, մասնավորապես, դեղորայքը ստանալուց 1 ամիս անց, ապա՝ 6 ամիսը մեկ արյան ընդհանուր քննություն, լյարդային տրանսամինազների՝ ԱԼՏ, ԱՍՏ որոշում: